

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻՆ
(27 սեպտեմբեր 1983 թ.)

«Այսօր է վոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղերուք ի սմա»:

Սաղմոսերգուի ուրախությամբ է, որ խոսք եմ առնում այսօր, նախ գոհություն տալու բարին մեր Աստծուն, որ շնորհեց ինձ կենաց բավարար տարիներ և արժանի դարձրեց ինձ, որ կարողանամ իմ կյանքի օրերը իմաստավորել ու արժևորել, իմ աշխատելու եռանդը նվիրաբերելով իմ Մայր Եկեղեցուն և իմ հարազատ ժողովրդին:

Այսպես է, որ այսօր հոգեպես մխիթարված և ինձ լիովին վարձատրված եմ զգում, իմ կյանքի յոթանասունհինգ տարիների ավարտին:

Մխիթարված եմ մանավանդ Սուրբ Լուսավորչի Գահի վրա, իմ քսանութ տարիների իրագործումներով, երբ տեսանելս զգացել եմ ու վայելել օգնականությունը երկնքի, սերն ու քաջալերանքը հայ հավատացյալ ժողովրդի ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի ու առատաձեռն բարերարների, նաև հույժ բարյացակամ և հարգալից վերաբերումը մեր հայրենի պետության:

Այստեղ պարտք եմ զգում շնորհակալություն հայտնել մեր Եկեղեցու նվիրապետական Աթոռներին, թեմական առաջնորդներին և Մայր Աթոռիս Գերագույն Հոգևոր Խորհրդին, որոնք մշտապես նեցուկ են հանդիսացել ինձ, իբրև հավատարիմ գործակիցներ: Խորհրդաց շնորհակալություն նաև ձեզ բոլորիդ, այստեղ խոսք առնողներիդ՝ Ամենապատիվ բարձրաստիճան ներկայացուցիչներ քույր Եկեղեցիների, որ Ձեր ներկայությամբ ու Ձեր եղբայրական սիրո արտահայտություններով ուրախացրիք իմ սիրտը, ուրախացրիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Եվս առավել սրտանց երախտապարտ եմ մեր պետական իշխանության և Երևանի մշակութային և գիտական հիմնարկությանց ներկայացուցիչներիդ, որ Ձեր մասնակցությունը բերեցիք սույն հանդիսության Ձեր ողջույնի ու գնահատանքի խոսքերով:

Այսօր, երբ նշվում են իմ գահակալության քսանութ տարիների իրագործումները, թույլ տվեք ամենայն անկեղծությամբ իմ գնահատանքի խոսքը ուղղել նաև Մայր Աթոռիս միաբանությանն ու պաշտոնեությանը, ճարտարապետական հանձնաժողովին, շինարար վարպետներին ու բոլոր ծառայողներին և բանվորներին, որոնցից ամեն մեկը իր պարտքը կատարեց՝ ջանասիրությամբ,

ձեռնհասությամբ և ազնվությամբ, նվիրական մի առաքելության իր նպատակը բերած լինելու արդար գիտակցությամբ: Մեր օրհնությունը բոլորին:

Իմ կյանքի յոթանասունհինգ տարիների ավարտին և գահակալության 28-րդ տարեդարձին, լրանում է նաև իմ քահանայական ձեռնադրության քառասուն տարին: Այս պահը բացառիկ է և անկրկնելի: Մի պահ, որ մղում է ինձ կանգ առնելու և իմ հոգու հայացքը սևեռելու այս իրողության վրա, որը իմ կյանքում մի խոր շրջադարձ հենդիսացավ, երբ աշխարհիկ կյանքից հրաժայտվելով ճամփա ընկա մի այլ կյանք ապրելու, որոնելու ճանապարհը՝ ծառայելու մեր հայրերի Աստծուն և իմ ժողովրդին: Ես չգիտեմ ի՞նչ չափով հասա իմ նպատակին, սակայն թույլ տվեք խոստովանել, որ իմ ուխտը անկեղծ եղավ և իմ տկար ուժերով ամեն ջանք թափեցի, որպեսզի մինչև վերջ մնամ իմ ուխտին հավատարիմ, մնամ հավատարիմ ու անխառն նաև ինքս իմ նկատմամբ:

Այսօր քառասուն տարիների իմ հոգևոր կյանքի փորձառությունից հետո, պարտք եմ համարում ձեր առաջ իմ սիրտը բացելու և իմ խոհերի մի մասը ձեզ ներկայացնելու՝ հոգևոր կոչման, քահանայական կոչման մասին, մտածելով, թե, միգուցե ինչ-որ չափով կկարողանամ օգտակար դառնալ իմ հոգևոր եղբայրներին, հատկապես երիտասարդներին, լինեն նրանք քահանա, վարդապետ թե եպիսկոպոս:

Հայտնի է բոլորիս, և վերջին տասնամյակներին առավել է ընդգծվում, որ քրիստոնեական կրոնը քրիստոսակենտրոն կրոն է՝ խարսխված Հիսուսի մարդեղության, խաչելության և հարության խորհուրդների վրա: Աստուծո Որդին մարդացավ, որպեսզի զոհվի և ապա հարություն առնի: Մեր կրոնական դավանանքի և զգացումների հիմքում ընկած են այս երեք խորհուրդները, այս երեք աստվածային տնօրինությունները:

Քահանայական կոչումը հաստատվել է մանավանդ խաչելության խորհրդի վրա, որ Աստուծո Որդու զոհաբերության փրկագործ արտահայտությունն է: Քրիստոս խաչի վրա զոհաբերեց իր մարմինն ու արյունը իբրև քահանա հավիտյան: Մենք՝ քահանաներս՝ ձեռնադրությամբ ընդունելով Սուրբ Հոգու շնորհները, Քրիստոսի օրինակով կոչված ենք մեր կյանքը զոհաբերելու, և մեր աշխատանքը նվիրաբերելու՝ ի սրբացումն, ի մխիթարություն և ի փրկություն մեր հավատացյալների հոգիների: Քահանայական կոչում ասանով, նշանակում է նախ և առաջ զոհաբերումի կոչվել:

Հոգևոր սպասավորը, այսպիսով, տևապես ուրախանում է, բաց և տխրում ու տառապում իր հոտի ամեն մի անդամի համար: Միայն ուրիշի համար տառապելով կարող ես թափանցել նրա էության մեջ, նրան հասկանալ ու նրան փրկել:

Քրիստոսով փրկությունը մեծագույն բարիքը լինելով, քահանայական ծառայությունը, իբրև միջնորդություն Աստուծո և մարդկանց միջև, հանդիսանում է շատ պատասխանատու առաքելություն: Գիտակցությունը, թե իրենից նախում ունի հավատացյալների հոգիների փրկությունը, մշտապես պետք է ապրող մի ապրում հանդիսանա ամեն մի հոգևորականի համար: Նա պարտավոր է մոտենալ իր առաքելությանը սեծագույն լրջությամբ և սրբական կրքով, որպեսզի նախ ինքն իրեն փրկի և ապա նրանց, ովքեր իր հովվությանն են հանձնված: Պողոս առաքյալ պատգամում է մեզ. «Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ ... Մի անփոյթ առներ պշնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան ... Զգոյշ լինիջիր անձին և վարդապետութեանդ և ի դմին

յաւեսջիր. կայդ եթէ առնիցես և կանձն ապրեցուսցես և կայնոսիկ որ քեզն լսիցեն» (Ա Տիմ. Դ 13—16):

Սբ. Հովհաննես Ոսկեբերան հայրապետը պատգամում է, որ քրիստոնեության էական հատկանիշը՝ հոգևորականների սերն է դեպի Աստված և նվիրումը դեպի իրենց հավատացյալները: Ոսկեբերան շարունակում է՝ «Ինչքա՞ն մաքրություն և ինչքա՞ն հավատք կպահանջվի քահանայից: Ինչքա՞ն մաքուր և ինչքա՞ն սուրբ պետք է լինի հոգին նրա, որ նման շնորհք պիտի ընդունի»:

Հոգևոր սպասավորի քահանայագործությունը, իբրև սրբացնող և շնորհաբաշխ արարք, անհրաժեշտ է, որ համապատասխանի նրա բարոյական կյանքի ընթացքին: Բարձր բարոյականը և ոգեկան կատարելության մակարդակը անհրաժեշտ պայմաններ են, առանց որոնց հոգևորականը, ինչ աստիճանի և դիրքի վրա էլ գտնվի, արժանի չի կարող լինել սուրբ պատարագի սեղան բարձրանալու: Պողոս առաքյալը բազմիցս հիշում է այն բարոյական արժանիքները, որոնք պետք է զարդարեն հոգևորականի կյանքն ու գործը: «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, զգաստ, ժուժկալ, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ: Մի արբեցող, մի հարկանող, այլ հանդարտ, մի՛ կռուող, մի՛ արծաթասէր» (Ա Տիմ. Գ 2—4): Պատահական չէ, որ առաքյալը եսակենտրոն հոռի հակումների շարքում մատնանշում է արծաթսիրությունը, որ նաև Եկեղեցու կյանքում երբեմն ավերներ է գործում: «Զի արմատ ամենայն չարեաց սիրարծաթսիրութիւն է» (Ա Տիմ. Զ 10): Թե Արևելքում, թե Արևմուտքում պատմության ընթացքում բազում անգամներ մեծանուն հայրապետներ և վանականներ հաճախ են ծառացել արծաթսիրության հակումների դեմ: Հիշենք այստեղ միայն Ս. Ներսես Շնորհալուն, որ իր անդրանիկ կոնդակում խարազանում է արծաթսիրության արարքները, չխնայելով իր ժամանակի քահանաներին, վանականներին և ոչ էլ եպիսկոպոսներին:

Ես ինքս, թե՛ Ռումինիայում իմ առաջնորդության օրերին և թե՛ իմ կաթողիկոսության այս 28 տարիների շրջանին հաճախ տառապել եմ ի տես արծաթսիրության երևույթների մեր եկեղեցական կյանքում:

Բոլորս և ամեն մեկս մեր դիրքերից, նվիրապետական Աթոռներ, թեմական եկեղեցական իշխանություններ, պարտավոր ենք արդարամտությամբ ու անկողմնակալությամբ հսկել, որպեսզի կարողանանք սուրբ պահել մեր Մայր Եկեղեցու նվիրական անունը և մաքուր ու անարատ՝ մեր հոգևոր դասի հելինասկությունը, որովհետև հիմնականում առողջ է մարմինը մեր Եկեղեցու և շատ-շատ են՝ հավատավոր, անշահախնդիր ու բարոյական նկարագրի տեր մեր հոգևորականները, թե Մայր Աթոռում և թե արտասահմանում:

Քահանայի սրբացնող ու շնորհաբաշխ առաքելության անբաժանելի մասն է կազմում նաև Աստուծո խոսքը եկեղեցու բեմից հավատացյալ հոտին հասցնելու պարտականությունը: Աստուծո խոսքով նա հոգեկան սնունդ կմատակարարի հավատացյալներին, որպեսզի նրանք իրենց կյանքով ու ձեռաց գործերով կոչվեն դառնալու «լուսո որդիներ» այս աշխարհի վրա, իրենց սրտերում ամուր ծրարած տեսիլքը հավիտենական կյանքի: Քարոզը պետք է ուսուցանի, համոզի և հուզի, որով քարոզիչի խոսքը լինելու է՝ հստակ, անկեղծ ու ջերմ:

Հայ հոգևորականի սրբացնող ու միսիթարող առաքելությունը իր սնձի գոհաբերումով և նվիրումով, տարածվում է ոչ միայն անհատ հավատացյալների վրա, այլ նաև նրանց ընկերային, համայնական և ազգային կյանքի վրա: Չմոռանանք, առաջին դարերի մեծագործ հոգևորականների հերոսական գործունեությունը ի խնդիր ընկերային բարեսիրական իրագործումների, ինչպի-

սիք եղան: հիմնադրումը հիվանդասացների, անկելանոցների, դրբանոցների և կրթական լուսավորական հաստատությունների: Նրանք, անսահման սիրով դեպի իրենց նմանները, նվիրումով նեռվեցին իրենց ժողովուրդների կյանքի հորձանքի մեջ, երկնային արքայությունը երկրի վրա կյանքի կոչելու երազանքով: Նրանք շատ անգամ ծառացան սարկության դեմ, ունևորների և իշխող դասակարգերի շահագործումների դեմ՝ պաշտպանելու համար ընչազուրկներին, ամիրավվածներին, շահագործվածներին: Նրանք մաքառեցին տգիտության դեմ, նախապաշարումների, անարդարությունների և բռնակալների դեմ, օտար կավթիչների և պատերազմների դեմ: Թե Արևելքում և թե Արևմուտքում այս ոգով տոգորված քրիստոնեական Եկեղեցիները փառավոր էջեր են արձանագրել պատմության ընթացքում:

Հայ Եկեղեցու պատմությունից հիշենք Դ դարում Մեծն Ներսես Կաթողիկոսի մարդասիրական, բարեսիրական իրագործումները Հայաստանում, որոնք նվիրական ավանդություն դառնալով, առավել կամ նվազ չափով շարունակվեցին մեր ողջ պատմության ընթացքում մինչև մեր օրերը:

Մոռանալով մեր ժամանակներին, ինչպե՞ս կարող ենք մոռանալ Խրիմյան Հայրիկի պայծառ դեմքը և քաջակորով արարքները, իբրև խոնարհ ժողովրդի դաստիարակ, իբրև նվագող վշտից հայրենյաց, իբրև հայրենիքի ազատագրության շեփորահար: Ինչպե՞ս կարող ենք մոռանալ հավարավոր քահանաներին, վանականներին, եպիսկոպոսներին, որոնք 1915—1916-ի ցեղասպանության տարիներին, իրենց հավատացյալների գլուխ կանգնած, կամովին գոհվեցին նրանց հետ միասին:

Ինչպե՞ս կարող ենք մոռանալ 1918-ի մայիսյան հերոսամարտերում, մասնակցությունը հայ քաջարի հոգևորականների, որոնք խաչը ձեռին կռվի դաշտ իջան, պատրաստ գոհվելու վասն Հիսուսի և վասն հայրենյաց, իրենց պայծառ մտապատկեր ունենալով Ե դարի Ղևոնդյան քահանաներին: Նրանց շարքերում կարո՞ղ ենք չհիշել անմոռաց անունը Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցի: Կարո՞ղ ենք չհիշել ծերունապարդ Գեորգ արքեպիսկոպոս Չորեքճյանին, որ 1942-ին նույն հայոց հայրենիքի պաշտպանության դիրքերից, մարտի հրավեր կարդաց հայ զինվորներին ընդդեմ մեր երկիրը ներխուժող հիտլերյան դժոխային ուժերի:

Մեր օրերին էլ, նախնյաց պայծառ օրինակով, հայ հոգևորականը սրբազան պարտք ունի պաշտպան կանգնելու ի խնդիր մեր մայր Եկեղեցու և մեր մայր երկրի գոյատևման ու անվտանգության: Մեր Եկեղեցու և հայրենի ժողովրդի գոյատևման ու անվտանգության նախապայմանը խաղաղության պահպանումն է ամբողջ աշխարհում և Հայաստանի սահմանների վրա: Անհրաժեշտ է փակել ամեն տեսակի պատերազմների ճանապարհը՝ իրականացնելով ընդհանուր զինաթափում, բոլոր տեսակի քաղաքական, ազգամիջյան հարցերը լուծելով միմիայն խաղաղ միջոցառումներով, Միացյալ Ազգերի Կազմակերպության հովանու ներքև: Ոչ մի գաղափարախոսություն, ոչ մի դասակարգային կամ պետական շահ չեն կարող արդարացնել որևէ պատերազմ մեր դարաշրջանում:

Հայ Եկեղեցին ու իր ժողովուրդը, մոտ հազար տարի տառապել են Հայաստանի մայր հողի վրա: Ոտնակոխ են եղել և հաճախ նահատակվել հեռուներից արշավող բարբարոս ցեղերի ամբակների տակ և կամ թատերաբեմ դարձել հարևան հզոր կայսրությունների միջև անվերջ պատերազմների ընթացքում: Իսկ առաջին համաշխարհային պատերազմին, Հայ Եկեղեցին ու ժողովուրդը գոհ գնացին 1915 թվականի Օսմանյան կառավարության կազմակերպած ցե-

դուսպանության, Վիլհելմյան Գերմանիայի մեղսակցությամբ: Զոհվեց մոտ երկու միլիոն անմեղ հայ ազգաբնակչություն Արևմտյան Հայաստանում: Այդ սև օրերին Գերմանիայում բարձր հնչեց միայն մեկ արդար ձայն: Զայնը իրավ քրիստոնյա հայր Իոհաննես Լեփսիուսի: Նրա ձայնը սակայն շուտով խափանվեց, որովհետև այդպես էին թելադրում Գերմանիայի պետական շահերը: Իսկ այստեղ-ապմից հետո, նույն հաղթող դաշնակից պետությունները, դրժելով իրենց բոլոր հանդիսավոր խոստումները և Սևրի դաշնագրի որոշումները, հայ ժողովրդի արդար դատը մոռացության տվեցին, որովհետև այդպես թելադրեցին այդ պահին նրանց պետական ինչ-ինչ շահերը: Մի անգամ ևս հնչեց արդար մի ձայն Ֆրիդիոֆ Նանսենի՝ «Խաբված մի ժողովուրդ» նշանավոր գրքով: Այդ ձայնը ևս մոռացության տրվեց:

Հայ ժողովրդի մի մասը միայն հիրկվեց՝ միանալով սովետական հանրապետությունների միության, որով նա կարողացավ գտնել վերածննդի նոր ճանապարհ, խաղաղության ու ապահովության պայմաններում: Ո՞ր հայ մարդը, ո՞ր հայ հոգևորականը պիտի կամենային, որ մի նոր պատերազմի կրակը մոտենար հապիվ վերաշինված սեր հայրենիքի սահմաններին:

Մեր բոլորի սրբազան պարտքն է աղոթել և գործել՝ խաղաղության, արդարության և ազգությունների բարեկամության մեծ գաղափարների հաղթանակի համար:

Իմ խոսքի ավարտին, ցանկանում եմ մի պահ կրկին անդրադառնալ հոգևորականի կոչման, նրա ինքնակատարելագործման ու ինքնակերտման իմ առաջադրած հիմնական հարցին՝ լսելի դարձնելով պատգամը Արևելքի Եկեղեցու մեծագույն դեմքերից մեկի՝ Սբ. Գրիգոր Նարեկացու, հեղինակը «Փախուստ ի Պոնտոս» նշանավոր գործի, նվիրված քահանայության ուսուցելության:

«Ես համարում եմ վտանգավոր գործ՝ հոգևոր կոչում ստանձնել և դառնալ ուրիշների հոգիների հովիվ և միջնորդ Աստուծո և մարդկանց միջև, նախքան զսպումը և տիրապետումը իմ մարմնի հակումների, նախքան մաքրաջրումը իմ գիտակցության և մոտենալը Աստուծո, ավելի քան սովորական մարդիկ:

Այլապես ո՞վ կարող է համարձակվել քահանա դառնալ, ինչքան ժամանակ չի իմանում տարբերություն դնել ստվերի և իրականության միջև, խարկանքի և ճշմարտության միջև, որպեսզի փախչի ստվերից և մոտենա ճշմարտության, որպեսզի փախչի հին տառից և ծառայի հոգու վերանորոգման, մարմնի մահացնող օրենքից անցնելու համար Աստուծո շնորհքին» (գլուխ 91-ից):

Թագավոր երկնավոր վեհեղեցի քո անուշարժ պահեա. ամէն: